

Ա Կ Տ Ն Վ Հ 26

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՂԱՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

28 օգոստոսի 2013 թվական

գ. Լուսաղբյուր

Համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 190-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում 2013 թվականի վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի» և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լուսաղբյուրի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 88 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանի (խմբի ղեկավար), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի գլխավոր մասնագետ Սուրեն Ավետիսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Արմեն Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջին կարգի մասնագետ Էմիլ Պետրոսյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Լուսաղբյուրի համայնքի ղեկավար Սամսոն Բարսեղյանի Լուսաղբյուրի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2013 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի օգոստոսի 8-ին և ավարտվել՝ 2013 թվականի օգոստոսի 21-ին:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի ավագանին 2012 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 11-Ն որոշմամբ ընդունել է իր կանխնակարգը:

2) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի ավագանին 2009 թվականի հունվարի 16-ի-ի թիվ 1-Ն որոշմամբ

(արձ. թիվ 1) հաստատել է համայնքի 2009-2012 թթ. զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառված թվով 5 ծրագրային աշխատանքներից կատարվել է 1-ը: Չեն կատարվել համայնքի խմելու ջրի, գյուղապետարանի շենքի, մանկապարտեզի շենքի նորոգման և համայնքային կենտրոնի կառուցման աշխատանքները:

Համայնքի ավագանու 2013 թվականի մարտի 21-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատվել է համայնքի 2013-2016թթ. զարգացման ծրագիրը:

3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ավագանին 24.12.2010թ. թիվ 21-Ն, (արձ. թիվ 13), 19.12.2011թ. թիվ 22-Ն, (արձ. թիվ 12), 24.12.2012թ. թիվ 18-Ն, (արձ. թիվ 12) որոշումներով հաստատել է համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեները:

Համայնքի ավագանին 25.02.2011թ. թիվ 2-Ն (արձ. թիվ 2), 24.02.2012թ. թիվ 1-Ն, (արձ. թիվ 1) և 23.02.2013թ. թիվ 3-Ն (արձ. թիվ 3) որոշումներով հաստատել է համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունները՝ համայնքի 2010, 2011 և 2012 թվականների բյուջեների կատարման վերաբերյալ:

Համայնքի ավագանին 18.11.2011թ.-19.07.2013թ. ընթացքում համայնքի ղեկավարի առաջարկությամբ թվով 15 որոշումներ է կայացրել համայնքի 2011, 2012 և 2013 թվականների բյուջեներում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

4) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին համապատասխան, համայնքի բյուջեի կատարման նկատմամբ համայնքի ավագանու կողմից վերակսկողություն իրականացնելու շրջանակներում, համայնքի ավագանին քննարկել է համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 22.10.2010թ. թիվ 15, արձ. թիվ 11, 29.04.2011թ. թիվ 7, արձ. թիվ 4, 21.10.2011թ. թիվ 15-Ա, արձ. թիվ 10, 23.04.2012թ. թիվ 3-Ա, արձ. թիվ 2, 22.08.2012թ. թիվ 7-Ա, արձ. թիվ 6, 19.07.2013թ. թիվ 14-Ա, արձ. թիվ 13):

Համայնքի ղեկավարը խախտել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը և սահմանված կարգով համայնքի բյուջեի կատարման ընթացքի մասին համայնքի ավագանուն եռամսյակը մեկ կամ հաղորդում չի ներկայացրել, կամ ներկայացրել է սահմանված ժամկետից ուշ:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքը օրենքով սահմանված կարգով վարկեր չի ստացել:

5) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի ավագանին որոշումներ է կայացրել կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրման վերաբերյալ, որոնք վերաբերվել են համայնքի կարիքավոր ընտանիքներին և Հայրենական Մեծ պատերազմի մասնակցին միանվագ դրամական օգնությունների տրամադրմանը (ավագանու որոշումներ՝ 22.10.2010թ. թիվ 16-Ա, արձ. 11, 29.04.2011թ. թիվ 8-Ա, արձ. 4, 23.08.2011թ. թիվ 13-Ա, արձ. 8, 08.05.2012թ. թիվ 4-Ա, արձ. 3, 05.11.2012թ. թիվ 9-Ա, արձ. թիվ 5, 14.10.2012թ. թիվ 16, արձ. թիվ 6, 16.03.2012թ. թիվ 6, արձ. թիվ 2, 03.08.2012թ. թիվ 9-Ա, արձ. թիվ 8,

30.04.2012թ. թիվ 7-Ա, արձ. թիվ 7, 06.05.2013թ. թիվ 8-Ա, արձ. թիվ 8, 21.05.2013թ. թիվ 9-Ա, արձ. թիվ 9, 15.07.2013թ. թիվ 12-Ա, արձ. թիվ 12):

6) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող բնակավայրի հողերից բնակելի կառուցապատման նպատակով աճուրդով օտարելու վերաբերյալ, ընդունված որոշմամբ հաստատվել են օտարվող հողամասերի մեկնարկային գներն ու պայմանները (ավագանու որոշում՝ 15.01.2013թ. թիվ 1-Ն, արձ. թիվ 1):

Համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 5-Ա (արձ. թիվ 5) որոշմամբ համայնքի ղեկավարի առաջարկությամբ համաձայնություն է տրվել համայնքի սեփականություն համարվող բնակավայրի հողերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.442 հա հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերվելու վերաբերյալ:

Համայնքի ավագանու 2013 թվականի մայիսի 24-ի թիվ 10-Ն (արձ. թիվ 10) որոշմամբ համայնքի ղեկավարի առաջարկությամբ համաձայնություն է տրվել պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության 73.39 հա արոտը օգտագործման տրամադրելու վերաբերյալ, հաստատվել են օգտագործման տրամադրման եղանակը, ժամկետները, նպատակը և վճարի չափը:

Համայնքի ավագանու կողմից ընդունված որոշումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին:

7) Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում, համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել և այդ հարցի վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

8) Ստուգված ժամանակաշրջանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետի համաձայն համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկման դեպքեր չեն արձանագրվել:

9) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն համայնքի ավագանին սահմանված կարգով որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին (ավագանու որոշումներ՝ 24.12.2010թ. թիվ 19-Ա, արձ. թիվ 13, 19.12.2011թ. թիվ 20-Ա, արձ. թիվ 12, 24.12.2012թ. թիվ 15-Ա, արձ. թիվ 12)

10) Համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, դրանց վերակազմակերպման կամ լուծարման մասին համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

11) Համայնքում ստուգված ժամանակաշրջանում բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին համաձայնություն տալու վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

12) Առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի համայնքային կանոնների հաստատման վերաբերյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի դրույթը հանված է:

13) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 22.12.2010թ. թիվ 18-Ն, արձ. թիվ 12, 19.12.2011թ. թիվ 19-Ն, արձ. թիվ 12, 24.12.2012թ. թիվ 13-Ն արձ. թիվ 12):

14) Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

15) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող բնակավայրի հողերից բնակելի կառուցապատման նպատակով աճուրդով օտարելու վերաբերյալ, ընդունված որոշմամբ հաստատվել են օտարվող հողամասերի մեկնարկային գներն ու պայմանները (ավագանու որոշում՝ 15.01.2013թ. թիվ 1-Ն, արձ. թիվ 1):

Համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 5-Ա (արձ. թիվ 5) որոշմամբ համայնքի ղեկավարի առաջարկությամբ համաձայնություն է տրվել համայնքի սեփականություն համարվող բնակավայրի հողերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.442 հա հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերվելու վերաբերյալ:

Համայնքի ավագանու 2013 թվականի մայիսի 24-ի թիվ 10-Ն (արձ. թիվ 10) որոշմամբ համայնքի ղեկավարի առաջարկությամբ համաձայնություն է տրվել պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության 73.39 հա արտոը օգտագործման տրամադրելու վերաբերյալ, հաստատվել են օգտագործման տրամադրման եղանակը, ժամկետները, նպատակը և վճարի չափը:

Համայնքի ավագանու կողմից ընդունված որոշումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին:

16) Ստուգված ժամանակաշրջանում համայնքային նշանակության փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

17) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն համայնքի ավագանին որոշումներ է կայացրել 2011, 2012 և 2013 թվականների համար աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ (ավագանու որոշումներ՝ 24.12.2010թ.

թիվ 20-Ա, արձ. թիվ 13, 19.12.2011թ. թիվ 21-Ա, արձ. թիվ 12, 24.12.2012թ. թիվ 16-Ա, արձ. թիվ 12):

Համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և (կամ) հաստիքացուցակը հաստատելու, ինչպես նաև փոփոխելու և (կամ) լրացնելու, համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինն դիմելու մասին համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել:

18) Համայնքի ավագանին չի հաստատել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:

19) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի համաձայն համայնքի ավագանին հաստատել է համայնքի սեփականության 2010, 2011 և 2012 թվականների գույքագրման փաստաթղթերը (ավագանու որոշումներ՝ 22.12.2010թ. թիվ 17, արձ. թիվ 12, 19.12.2011թ. թիվ 18, արձ. թիվ 12, 24.12.2012թ. թիվ 17-Ա, արձ. թիվ 12):

### **1.Ֆինանսների բնագավառ**

1) Լուսաղբյուրի համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն կազմել և սահմանված ժամկետներում համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի 2011-2013 թվականների բյուջեների նախագծերը՝ (համայնքի ավագանու որոշումներ 24.12.2010թ. թիվ 21-Ն, (արձ թիվ 13), 19.12.2011թ. թիվ 22-Ն, (արձ. թիվ 12), 24.12.2012թ. թիվ 18-Ն, (արձ. թիվ 12), դրանցում առաջարկվող թվով 15 փոփոխությունները, տարեկան հաշվետվությունները (համայնքի ավագանու որոշումներ 25.02.2011թ. թիվ 2-Ն (արձ. թիվ 2), 24.02.2012թ. թիվ 1-Ն, (արձ. թիվ 1) և 23.02.2013թ. թիվ 3-Ն (արձ. թիվ 3):

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածների՝ համայնքի 2010-2012թթ. բյուջեների կատարողականի տարեկան հաշվետվություններն ավագանին քննարկել և հաստատել է առանց աուդիտորական եզրակացության:

Ստուգված ժամանակաշրջանում 2010թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 12,042.0 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 11,544.0 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 95.9 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 498.0 հազար դրամ:

2011թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 12,578.4 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 11,092.1 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 88.2 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 1486.3 հազար դրամ:

2012թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 12,564.0 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 11,597.3 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 92.3 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 966.7 հազար դրամ:

2013 թվականի 7 ամիսներին համայնքի բյուջեով նախատեսված 7,436.5 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 6,587.6 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 88.6 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 848.9 հազար դրամ:

2) Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը (ավագանու որոշումներ՝ (ավագանու որոշումներ՝ 22.12.2010թ. թիվ 18-Ն, արձ. թիվ 12, 19.12.2011թ. թիվ 19-Ն, արձ. թիվ 12, 24.12.2012թ. թիվ 13-Ն արձ. թիվ 12):

3) Լուսաղբյուրի համայնքի ղեկավարն ոչ ամբողջությամբ է իրականացրել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.1-րդ մասի դրույթով սահմանված՝ տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքային սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումների կազմակերպման և վերահսկման վերաբերյալ պարտադիր լիազորությունները:

4) Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.2-րդ մասի պահանջի, համայնքի ղեկավարի կողմից տեղական տուրքեր և վճարներ չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն կիրառվել:

5) Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ղեկավարը ավագանու հաստատմանը չի ներկայացրել:

6) Համայնքի ղեկավարը ստուգված ժամանակաշրջանում ոչ ամբողջությամբ է ապահովել համայնքի բյուջեի եկամուտների ամբողջական կատարումը: Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջի համաձայն տնօրինել է համայնքի բյուջեի միջոցները:

Համայնքի վարչական բյուջե հավաքագրված գումարները հիմնականում ծախսվել են աշխատավարձերի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների, էլեկտրաէներգիայի, կոմունալ վճարումների, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դիմական օգնություն տրամադրելուն և այլ ծախսերի համար:

Ստուգված ժամանակահատվածում համայնքի ֆոնդային բյուջեներից կատարված ծախսերը հետևյալն են.

2010 թվական - 318.5 հազար դրամ,

2011 և 2012թթ. համայնքի ֆոնդային բյուջեներից ծախսեր չեն կատարվել,

2013 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ – 514.0 հազար դրամ:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները: 2011-2012թթ. ընթացքում գնումների պլան չի կազմվել և չի հրապարակվել:

2013 թվականի համար կազմվել է գնումների պլանը պատվիրատու ղեկավարի կողմից և հրապարակվել է Gnumner.am կայքում, սակայն ըստ օրենսդրության պատվիրատու ղեկավարի

կողմից չի սահմանվել գնումների համակարգող, պատասխանատու ստորաբաժանում և գնահատող հանձնաժողով:

## **2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ**

1) Լուսաղբյուրի համայնքի ղեկավարի կողմից համայնքի գլխավոր հատակագծի ու հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթերի կազմման գործառույթներ չեն իրականացվել:

2) Համայնքի քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարման, համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմման և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելու գործընթաց համայնքի ղեկավարի կողմից չի իրականացվել:

3) Համայնքի բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին իրազեկման, կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցման գործընթաց համայնքի ղեկավարի կողմից չի իրականացվել:

4) Շինարարության (քանդման) թույլտվություն համայնքի ղեկավարի կողմից չի տրամադրվել:

5) Ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտեր համայնքի ղեկավարի կողմից չեն ձևակերպվել:

6) Համայնքի ղեկավարի կողմից ինքնակամ շինարարության կանխման ու կասեցման դեպքեր չեն հայտնաբերվել, օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

7) Համայնքի ղեկավարի կողմից շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջների կատարման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

8) Համայնքի ղեկավարի կողմից իրականացվել է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառման, սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի կազմման աշխատանքներ և դրանք սահմանված կարգով ներկայացվել են համայնքի ավագանու հաստատմանը:

9) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն չի տրամադրվել:

10) Համայնքային սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործման կազմակերպման և կառավարման վերաբերյալ գործառույթներ չեն իրականացվել:

11) Լուսաղբյուրի համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքեր չկան:

### 3. Հողօգտագործման բնագավառ

1) Լուսաղբյուրի համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները ֆինանսական միջոցների բացակայությամբ պայմանավորված չեն կազմվել:

2) Լուսաղբյուրի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են ընդամենը 1483,1 հա, այդ թվում՝ վարելահող-151,83 հա, արոտ-1295,34 հա և այլ հողեր-35,93 հա:

Գյուղատնտեսական նշանակության հողերի համար օրենքով սահմանված կարգով պայմանագրեր չեն կնքվել:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 151,83 հա վարելահող, և 1295,34 հա արոտն օրենքով սահմանված կարգով օգտագործման տրամադրված չէ:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝

01.08.2010թ.–31.12.2010թ. ժամանակահատվածում բյուջեով նախատեսված 355,7 հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 269,7 հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 86.0 հազ.դրամ:

2011թ. բյուջեով նախատեսված 859,9 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 861,35 հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, բյուջեով նախատեսվածից ավել է մուտքագրվել 1,45 հազ.դրամ:

2012թ. բյուջեով նախատեսված 818,4 հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 819,6 հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, այսինքն բյուջեով նախատեսվածից ավել է մուտքագրվել 1,2 հազ. դրամ:

01.01.2013-01.08.2013թ. դրությամբ բյուջեով նախատեսված 477,7 հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 443,3 հազ. դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին, բյուջեով նախատեսվածից պակաս է մուտքագրվել 34,4 հազ. դրամ:

2013 թվականին օրենքով սահմանված կարգով օտարվել է համայնքային սեփականություն համարվող բնակավայրի հողերից /բնակելի կառուցապատում/ 0,24 հա 319,6 հազ. դրամ գումարով:

3) Լուսաղբյուրի համայնքի վարչական սահմաններում գտվող հողերը հիմնականում օգտագործվել են նպատակային, սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվել հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Համայնքի ղեկավարի կողմից ձեռնարկվում են միջոցներ համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության 151,83 հա վարելահողը և 1295,34 հա արոտն օգտագործման տրամադրելու համար:

4) Ստուգված ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ապօրինի հողօգտագործումների դեպքեր չեն արձանագրվել:



5) Ստուգված ժամանակահատվածում օրենքով սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշիռի կազմման գործընթացը:

6) Համայնքի ղեկավարի կողմից պատշաճ վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 3 գեոդեզիական կետերի և սահմանանիշերի պահպանության նկատմամբ:

#### **4. Տրանսպորտի բնագավառ**

1) Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման գործառույթներ համայնքի ղեկավարի կողմից չեն իրականացվել:

2) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեության կազմակերպման և կառավարման գործառույթներ համայնքի ղեկավարի կողմից չեն իրականացվել:

3) Իրավասու մարմինների ներկայացմամբ համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման ու հանման հաստատման և թույլատրման գործառույթներ համայնքի ղեկավարի կողմից չեն իրականացվել:

4) Համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմա չի կազմվել և համայնքի ավագանու հաստատմանը չի ներկայացվել (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ որոշումներ չի կայացվել:

#### **7. Այլ բնագավառներ**

1) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից հրավիրվել և անցկացվել են համայնքի ավագանու 39 նիստեր, որոնցում քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող 61 հարցեր և ընդունվել նորմատիվ ու անհատական բնույթի նույնքան որոշումներ:

Գյուղապետարանի աշխատակազմում վարվել է համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների 3 գրանցամատյաններ, որոնք սահմանված կարգով համարակալված, թելակարված և կնքված են համայնքի ղեկավարի կողմից:

Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջը և համայնքի ավագանու 2010, 2011 և 2012 թվականներին ընդունված առանձին որոշումներ ՀՀ Շիրակի մարզպետարան է առաքվել օրենքով սահմանված 7 օր ժամկետից ուշացումով: Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգը և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ բնույթի առանձին իրավական ակտեր /համայնքի բյուջեի և նրանում կատարված փոփոխությունների հաստատում, բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատում, օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանում և սյն/ պետական իրավական փորձաքննության համար չի ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն:

2) Համայնքի ղեկավարը ապահովել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1<sup>1</sup> կետի պահանջը և իր կողմից ընդունված անհատական ակտերը սահմանված ժամկետում ուղարկել է համայնքի ավագանու անդամներին և փակցրել համայնքի ավագանու նստավայրում:

3) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը կազմել և սահմանված ժամկետում համայնքի ավագանու 2013 թվականի մարտի 21-ի նիստի քննարկմանն է ներկայացրել համայնքի 2013-2016 թթ զարգացման ծրագիրը:

4) Համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 6-Ա որոշմամբ (արձ. 6) հաստատվել է գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը:

5) Լուսադբյուրի համայնքը առանձնացված ստորաբաժանումներ չունի:

6) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը 2011, 2012 և 2013 թվականների աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է համայնքի ավագանու հաստատմանը:

7) Համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ղեկավարի կողմից ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:

8) Համայնքի ղեկավարի կողմից համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների խորհրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:

9) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված լիազորությունների շրջանակում համայնքի ղեկավարի 2012 թվականի

սեպտեմբերի 7-ի թիվ 7 կարգադրությամբ զբաղեցրած պաշտոնից ազատվել է համայնքի ղեկավարի տեղակալը:

Համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 14 կարգադրությամբ զբաղեցրած պաշտոնից ազատվել է գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 12 կարգադրությամբ նշանակում է կատարվել համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնին:

Համայնքի ղեկավարի 2013 թվականի ապրիլի 1-ի թիվ 4 կարգադրությամբ, օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձին նշանակում է կատարվել գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնին:

10) Համայնքի ղեկավարի կողմից բյուջետային հիմնարկների ղեկավարների պաշտոնների նշանակման վերաբերյալ կարգադրություններ չեն արձակվել:

11) Տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշման նախագիծ համայնքի ղեկավարի կողմից ավագանու հաստատմանը չի ներկայացվել:

12) Համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրեր չեն կնքվել և միջհամայնքային միավորում ստեղծելու, ինչպես նաև համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշման նախագծեր ավագանու հաստատմանը չեն ներկայացվել:

13) Համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանու 2013 թվականի հունվարի 15-ի թիվ 1-Ն (արձ.1) որոշմամբ համաձայնություն է տրվել համայնքի սեփականություն համարվող բնակավայրի հողերից բնակելի կառուցապատման նպատակով աճուրդով օտարելու վերաբերյալ, ընդունված որոշմամբ հաստատվել են օտարվող հողամասերի մեկնարկային գներն ու պայմանները:

14) Համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություն չի ներկայացվել:

15) Համայնքի փողոցների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների անվանման կամ վերանվանման վերաբերյալ համայնքի ավագանուն առաջարկություն չի ներկայացվել:

16) Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել են թվով 4 որոշումներ (15.03.2011թ. թիվ 2, 26.11.2012թ. թիվ 9, 10 և 10.12.2012թ. թիվ 12) շենքերի և շինությունների համարակալման (հասցեավորման) վերաբերյալ:

17) Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 29 որոշում և արձակվել 80 կարգադրություն, որոնք սահմանված կարգով արձանագրված են համապատասխան գրանցամատյաններում:

18) Որպես պետության պատվիրակած լիազորություն համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել և ղեկավարվել է համայնքում անասնաբուժական ծառայությունը: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների

հիվանդությունների կանխման և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Ստուգված ժամանակաշրջանում համայնքում անասունների հիվանդությունների բռնկման դեպքեր չեն արձանագրվել և նման հիվանդությունների կանխմանն ուղղված կարանտինային միջոցառումներ չեն իրականացվել:

20) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրների վարման աշխատանքներ չեն իրականացվել:

21) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

Համայնքի ղեկավարի 2011 թվականի մայիսի 20-ի թիվ 5 որոշմամբ համայնքում ստեղծվել են քաղաքացիական պաշտպանության շտաբ, տարհանման հանձնաժողով և քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ:

22) Գյուղապետարանում սահմանված կարգով վարվում է համայնքային գիրք (ծխամատյան) և կազմակերպվում է համայնքի բնակիչների հաշվառումը:

23) Համայնքի ղեկավարի կողմից համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում ներկայացնելու դեպքեր չեն արձանագրվել:

24) Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից կատարվում են քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության են առնվում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ:

25) Համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 6-ի թիվ 10-Ա որոշմամբ սահմանված կարգով ստեղծվել և գործում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով: Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից խնամակալություն կամ հոգաբարձություն չի սահմանվել:

26) Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և ծնունդների պետական գրանցումներն ավազակելու ուղղությամբ:

27) Գյուղապետարանում օրենքով սահմանված կարգով վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացվել են տարածքային զինվորական կոմիսարիատ: Ստուգված ժամանակաշրջանում համայնքի զինապարտ քաղաքացիների կողմից իրենց պարտականությունները խախտելու դեպքեր չեն արձանագրվել:

## ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. Համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 6-Ա որոշմամբ (արձ. 6) հաստատվել է գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը:

2. ՀՀ կառավարության սահմանած կարգով աշխատակազմում չեն վարվում համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման գրանցամատյաններ:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 29 որոշում և արձակվել 80 կարգադրություն, որոնք արձանագրված են սահմանված կարգով համարակալված, թելակարված և կնքված համապատասխան գրանցամատյաններում:

3. Ուսումնասիրության ենթարկված իրավական ակտերը գրանցված չեն հաշվառման մատյաններում:

4. Գյուղապետարանի աշխատակազմը ստորաբաժանում չունի:

5. ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 55-Ա հրամանով հաստատված գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 2-ն են՝ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր՝ 1.2-1), առաջատար մասնագետ-հաշվապահ (ծածկագիր՝ 3.1-1), Նշված երկու համայնքային ծառայության պաշտոններն օրենքով սահմանված կարգով զբաղեցված են: Համայնքի ավագանու համապատասխան որոշումներով 2010, 2011, 2012 և 2013 թվականների համար հաստատված գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանումները համապատասխանում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի N 55-Ա հրամանով հաստատված Լուսաղբյուրի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում նշված անվանումներին: Համայնքային ծառայողների մասով 2010-2013 թվականների համար հաստատված պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի և «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

6. Գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատվել են համայնքի ղեկավարի 2010 թվականի հուլիսի 8-ի թիվ 4 որոշմամբ, իսկ գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնի նոր անձնագիրը հաստատվել է համայնքի ղեկավարի 2013 թվականի ապրիլի 2-ի թիվ 10 որոշմամբ: Ստուգված ժամանակաշրջանում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկից պաշտոններ չեն հանվել և նոր պաշտոններ չեն ավելացվել: Համայնքի ղեկավարի կողմից հաստատված պաշտոնների անձնագրերի բովանդակությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին:

7. Համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը հիմնականում կատարվել է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 20-Ն հրամանով հաստատված «Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին» համապատասխան:

8. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգի համաձայն համայնքի ղեկավարի 2009 թվականի հունիսի 8-ի թիվ 9 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմը:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն համայնքի ավագանին որոշել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող նորընտիր ավագանու անդամների քանակական և անհատական կազմը (ավագանու որոշում՝ 22.03.2010թ. թիվ 14 արձ. թիվ 14):

Համայնքի ղեկավարի կողմից համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմի հաստատումից հետո, սահմանված ժամկետում հրավիրվել է հանձնաժողովի աշխատակարգային նիստ և ընտրվել է հանձնաժողովի նախագահի տեղակալ:

9. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարի կողմից 2009 թվականի հունիսի 8-ի թիվ 9 որոշմամբ հաստատվել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգերը:

10. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված գյուղապետարանի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա, համայնքի ղեկավարի 2012 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 11 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը և ապահովվել է դրա պատշաճ իրագրելումը աշխատակազմի բոլոր աշխատակիցներին:

11. Աշխատակազմում վարվում են «Համայնքային ծառայության թափուր տեղերի համար անցկացվող մրցույթներին դիմած քաղաքացիների տվյալների գրառման», «Համայնքային ծառայողների վերապատրաստման հաշվառման» և «Համայնքային ծառայողների անձնական գործերի հաշվառման» համարակալված մատյաններ:

12. Մրցույթի արդյունքներով համայնքային ծառայության պաշտոնի նշանակված անձի կրթության, համապատասխան ստաժի և այլ տվյալները համապատասխանում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:

13. Համայնքի ղեկավարի կողմից ՀՀ Շիրակի մարզպետարան ներկայացված գրանցամատյանային (Ձև NN 1, 2) տվյալներն արժանահավատ են:

14. 2013 թվականի մարտի 29-ին Լուսադթյուրի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող աշխատակազմի քարտուղարի մրցույթի անցկացումն ու փաստաթղթերի փաթեթների կազմումը կատարվել են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի


օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգին համապատասխան:


15. Գյուղապետարանում սահմանված կարգով վարվում է գինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյան:


16. Ստուգված ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից Լուսաղբյուրի գյուղապետարանի աշխատակազմում կադրային գործի վարման գործընթացների ուսումնասիրություն չի անցկացվել:

 ԼԻՊԱՐԻՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

 ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

 ՀՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

 ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

 ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

 ԷՄԻԼ ՊԵՏՐՈՍՅԱՆ

 ՍԱՄՍՈՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ